# ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

## Ի ՆՊԱՍՏ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ

## ՀԱՅ ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ ՆԱԽԱՁԵՌՆԱՐԿ

## ԹՈՂ ԱՄԷ՛Ն ՄԱՐԴ ԻՐ ԼՈՒՄԱ՛Ն ՏԱՅ

Երէկ հաճելի անակնկալ մը ունեցանք։

Հայ գործաւոր մը, Յակոբ Թովմաճեանեան անունով, խմբագրատուն ներկայացաւ իր ընկերոջ տարազով և ըսաւ.

— Մենք Ազգալ Դարու գանուող Մնէիկ էք. Տէրունեանի չինէի փաղըրիքային գործաւորներն ենք. օրական 10-12 ղրուշ կը շահինք... ուզեցինք նոյնքէն գիրերու գինուն համար ըլլալիք Յոբելեանին առթիւ մէկ քիչնիս հանգանակութիւն մը ընել և 284 ղրշ. հաւաքեցինք. զոր անուանին ձեզի կը յանձնենք. Մենք ուսումնական չենք, բայց գիրին ու գիրքին յարգը գիտենք... մեր փրկութիւնը ան է։

Եւ մարդը սեղանին վրայ դրաւ հանգանակուած գումարը։

Այս ինքնաբերական մեծարգոյ գեղեցիկ էր որ յուզումով առինք դրամը։

— Ձեր թերթին մէջ գրեցէ՛ք որ մեր օրինակին հետեւելով ուրիշներն ալ տան, յարունակեց գործաւորը. մենք արդէն ուրիշներէն գործնող պիտի ժողվենք։

Սորվեցան կը գնենք այս աւանդին ցուցակը և միեւնոյն ատեն հրաւէր կ'ուղղենք մեր բոլոր հայրենակիցներուն հետեւելու այս գեղեցիկ օրինակին։

Հայկական տառերը մեր ազգային մեծագոյն փառքերէն մէկն են. անոնց շնորհիւ, գարերու ընթացքին, անփոփոխելի մնացած է մեր լեզուն և մեր ցեղը։ Կորցուցինք ու վերանեցինք ամէն ինչ, մեր գոյութիւնը Մեսրոպեան տառերուն կը պարտինք. անոնք յաղթած ու չեղոքացուցած են նոյն իսկ մեծ եկեղեցիներու կամ Աւետարաններու ամէն հալածանքները։

Հիմա, մեծ Յոբելեանին առթիւ, մատուցանենք մեր երախտագիտութեան տուրքը այդ սիրական տառերուն։

Երբ հայ բանուորը, գրեթէ անգրագէտ, կը զգայ գիրին վեհութիւնը և անոր հանդէպ իր ունեցած պարտքը, մի՞թէ կրնա՞ն ուրիշները անտարբեր մնալ։

Թող, փառաւոր, երկրպագու թո՛ղ իրենց բաժինը բերեն այս հանգանակութեան։

Ուսուցիչներն և ուսանողները, համալսարանականները, խմբագիրները, գրողները, ծովինները, իբրև գիրին երախտաւորեալները փութան պարտքերնին հատուցանելու։

Արհեստաւորը, գործաւորը, չունեցողն ու չքաւորը, իրենց կարողութեան չափով, թո՛ղ տան իրենց նուէրները։

Մենք մեր էջերը յատկացնել պիտի բանանք այս հանգանակութեան առջեւ, հրատարակելով բոլոր նուիրատուներու անունները և ընդունելով մինչեւ մէկ ղրուշի նուէրը։

Հանգանակուած գումարը պիտի յանձնուի Յոբելեանական Յանձնաժողովին որպէս զի որոշուած նպատակներուն գործածուի։

Մինչեւ հիմա, Պոլիսէն մէջ, ՀԱՐԻՒՐ ՀԱԶԱՐ ՈՍԿԻԻ մօտ գումար մը հանգանակուած է այս նպատակին համար, կը լսե՞նք. հարիւր հազար ոսկի մինչդեռ հոս, մեր մէջ, տակաւին ո՛չ մէկ գումար կարելի է հաւաքել։

Արժէք ունի՞ չէ՞ մեզի համար։ Մի՞թէ Հայկական տառերէն միայն մեր Պոլիսեցի եղբայրնե՞րը օգտուած են, մի՞թէ անոնք միայն գիտեն գնահատել ազգային փառքերը։

Դարմանենք զանէ մասամբ, մեր պակասը, քանի որ դեռ ժամանակ է։

Մեր կոչը, բնականաբար, կ'ուղղենք ո՛չ թէ միայն մեր ազգայիններուն, այլ նաև մեր Կաթոլիկ ու Բողոքական եղբայրներուն, վերջապէս բոլոր անոնց որոնք Հայ տառերու հանդէպ պարտականութիւն մը ունին։

## ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱԿԸ

| | Ղրշ. | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Սանասար Գաղասարեան | 20 | Սահակ Օտապեան | 25 |
| Օնոփէ Անուեան | 54 | Միհրան Գարիգցեանեան | 20 | Եղիա Բաքմաճեան | 20 |
| Կարապետ Մինասեան | 40 | Դաւիթ Վարդանեան | 35 | Յարութիւն Ալեփեան | 20 |
| Յակոբ Թովմաճեանեան | 20 | Օնոփէ Շիրինեան | 30 | Գումար | 284 |